ՀԱՎԵԼՎԱԾ

Հաստատված է նոր խմբագրությամբ

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ Տնօրինության

19.05.2022թ. թիվ 52-Լ որոշմամբ

Ուժի մեջ է 23.05.2022թ.

ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԵՆԻՇԱՅԻՆ/ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ
(ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

ԱՌԵՎՏՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐ

Պայման[1]	Ներմուծման վարկեր	Պատվերի ֆինանսավորման վարկեր	Արտահանման խթանման վարկեր	Նախաարտահանման և հետարտահանման ֆինանսավորում Հայաստանի Արտահանման Ապահովագրության Գործակալության (ՀԱԱԳ)-ի ապահովագրությամբ
Վարկի նպատակը	Հիմնական և շրջանառու միջոցների համալրման նպատակներով ներմուծում	Պայմանագրով/մրցույթով/ նախատեսված ապրանքների մատակարարում կամ ծառայությունների մատուցում	Արտահանման պայմանագրի կատարման համար ապրանքների և/կամ ծառայությունների ձեռքբերման և/կամ պատրաստման նպատակով, իսկ հետարտահանման ֆինանսավորման դեպքում՝ արտահանման պայմանագրի կատարման համար կատարված ծախսերի վերաֆինանսավորման նպատակով	
Տրամադրման եղանակը	Անկանխիկ	Անկանխիկ	Անկանխիկ	Անկանխիկ
Առավելագույն և նվազագույն գումարը	10,000,000 - 700,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ	Հաճախորդի կողմից ապրանքների մատակարարման/ծառայությունների մատուցման պայմանագրային գումարի ինքնարժեքի մինչև 70%-ի չափով, նվազագույնը 10,000,000 ՀՀ դրամ, առավելագույնը 300,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ	Պայմանագրային գումարի 70%-ի չափով, նվազագույնը 10,000,000 ՀՀ դրամ, առավելագույնը 300,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ	Կախված ՀԱԱԳ-ի ապահովագրական սահմանաչափի պայմաններից
Արժույթը	AMD,USD, EUR, RUB	AMD, USD, EUR, RUB	AMD, USD, EUR, RUB	AMD, USD, EUR, RUB
Առավելագույն և նվազագույն ժամկետը	Շրջանառում միջոցներ՝ 1-ից մինչև 12 ամիս (Տվյալ ապրանքատեսակի առևտրային ցիկլի տևողության չափով) իսկ հիմնական միջոցներ մինչև 24 ամիս	Կնքված պայմանագրով նախատեսված ողջամիտ ժամկետով, բայց ոչ ավել քան 12 ամիս	Կախված մատակարարման պայմանագրով սահմանված գնորդի վճարման պայմանից	Նախաարտահանման ֆինանսավորման դեպքում՝ տվյալ ապրանքատեսակի առևտրային ցիկլի տևողության չափով, բայց ոչ ավել քան 12 ամիս, իսկ հետարտահանման ֆինանսավորման դեպքում՝ կախված մատակարարման պայմանագրով սահմանված՝ գնորդի վճարման պայմանից. Բայց ոչ ավել, քան 24 ամիս

Առավելագույն արտոնյալ ժամանակաշրջան	Շրջանառու միջոցներ՝ մինչև 11 ամիս. Հիմնական միջոցներ՝ մինչև 23 ամիս	Մինչև 11 ամիս	Կախված մատակարարման պայմանագրով սահմանված՝ գնորդի վճարման պայմանից	Կախված մատակարարման պայմանագրով սահմանված՝ գնորդի վճարման պայմանից
Մարման ժամանակացույցը	Միանվագ՝ վարկային պայմանագրի ժամկետի վերջում,	Միանվագ՝ մատակարարման պայմանագրով նախատեսված հասույթի գումարից,	Միանվագ կամ համաձայն մատակարարման պայմանագրով նախատեսված ժամանակացույցի՝ մատակարարման պայմանագրով նախատեսված հասույթի գումարից,	Միանվագ ժամկետի վերջում կամ համաձայն մատակարարման պայմանագրով նախատեսված ժամանակացույցի՝ մատակարարման պայմանագրով նախատեսված հասույթի գումարից,
Տոկոսների մարման ժամանակացույցը	Վարկի տոկոսագումարները վճարվում են ամսական պարբերականությամբ			Նախաարտահանման ֆինանսավորման դեպքում՝ ամսական պարբերականությամբ, իսկ հետարտահանման ֆինանսավորման դեպքում՝ ժամկետի վերջում
Անվանական տոկոսադրույքը[1]	ՀՀ դրամ 13.50%-14.50% ԱՄՆ դոլար 8.00%-10.00% Եվրո 5.50%-8.50% ՌԴ ռուբլի 15.00%-20.00%	ՀՀ դրամ 14.00%-15.00% ԱՄՆ դոլար 9.00%-11.00% Եվրո 7.00%-9.00% ՌԴ ռուբլի 15.00%-20.00%	ՀՀ դրամ 13.00%- 14.00% ԱՄՆ դոլար 7.75%- 9.75% Եվրո 5.25%- 8.00% ՌԴ ռուբլի 15.00%-20.00%	ՀՀ դրամ 13.00%- 14.00% ԱՄՆ դոլար 7.00%- 9.00% Եվրո 5.00%- 8.50% ՌԴ ռուբլի 15.00%-20.00%
Սահմանաչափի հաստատման միջնորդավճար	Սահմանաչափի գումարի 0.25%, min 25,000 ՀՀ դրամ			
Տրամադրման միջնորդավճար	0.5% միանվագ, նվազագույնը՝ 50,000 ՀՀ դրամ	0.5% միանվագ, նվազագույնը՝ 50,000 ՀՀ դրամ	0.25% միանվագ, նվազագույնը՝ 50,000 ՀՀ դրամ	Նախաարտահանման ֆինանսավորման դեպքում՝ համաձայն ՀԱԱԳ-ի կողմից հաստատված ապահովագրական սահմանաչափի պայմանների, իսկ հետարտահանման ֆինանսավորման դեպքում՝

[1] Տոկոսադրույքի սահմանումը կախված է վարկի ժամկետից

				սկսած 0.1%՝ հաշվարկված հ/ա գումարից
Ապահովության տեսակները	Հիմնական միջոցներ (այդ թվում անշարժ կամ շարժական գույք), շրջանառու միջոցներ, բաժնեմասեր/ բաժնետոմսեր, սեփականատերերի/ ղեկավարների անձնական երաշխավորությունները	Մատակարարման պայմանագրից բխող պահանջների իրավունքները, ակկրեդիտիվներ, սեփականատերերի/ ղեկավարների անձնական երաշխավորությունները	Մատակարարման պայմանագրից բխող պահանջների իրավունքները, ակկրեդիտիվներ, Հիմնական միջոցներ (այդ թվում անշարժ կամ շարժական գույք), շրջանառու միջոցներ, բաժնեմասեր/ բաժնետոմսեր, սեփականատերերի/ ղեկավարների անձնական երաշխավորությունները	Սեփականատերերի/ ղեկավարների անձնական երաշխավորությունները, վարկի վերադարձման և գնորդի չվճարման ռիսկի ապահովագրություն ՀԱԱԳ-ի կողմից, գնորդի հանդեպ վարձատրության պահանջի իրավունքի գրավ
Գրավի գնահատում	Ըստ պահանջի՝ բանկի հետ համագործակցող գնահատող կազմակերպության կողմից	-	-	-
Ապահովագրություն	բանկի պահանջով, առնվազն վարկի մնացորդի չափով	բեռի ապահովագրություն		վարկի վերադարձման և գնորդի չվճարման ռիսկի ապահովագրություն ՀԱԱԳ-ի կողմից
Ապահովագրության մոտավոր ծախսը	• Անշարժ գույքի տարեկան ապահովագրավճարը կազմում է գույքի արժեքի մոտ 0,15-0.3 տոկոսը, • Սարքավորումների տարեկան ապահովագրավճարը կազմում է գույքի արժեքի մոտ 0.2-0.5 տոկոսը, • Շրջանառու միջոցների տարեկան ապահովագրավճարը կազմում է գույքի արժեքի մոտ 0.3-0.5 տոկոսը, • Տրանսպորտային միջոցների տարեկան ապահովագրավճարը սկսվում է գույքի արժեքի մոտ 2,5 տոկոսից, • Ճանապարհին գտնվող ապրանքների ապահովագրության վճարը սկսվում է գույքի արժեքի մոտ 0.13 տոկոսից՝ կախված ապահովագրվող ապրանքի տեսակից:			Հետարտահանման և նախաարտահանման ֆինանսավորման դեպքում՝ համաձայն ՀԱԱԳ-ի սակագների (տես www.eia.am)
Ֆինանսավորման տրամադրման պայմանները	-	• Տրամադրվում է բանկի համար ընդունելի գնորդների հետ կնքված պայմանագրերի, ակրեդիտիվների, երաշխիքների առկայության պարագայում • Մատակարարը չպետք է ունենա ժամկետանց պարտավորություններ, այդ թվում՝ ժամկետանց հարկային պարտականություններ • Մատակարարը ֆինանսավորված գումարը պարտավոր է ուղղել միայն Գնորդի կողմից պատվիրված ապրանքների/ծառայությունների դիմաց վճարում կատարելու համար, բացառությամբ ՀԱԱԳ-ի ապահովագրությամբ հետարտահանման ֆինանսավորման, որի դեպքում ֆինանսավորված գումարի նպատակային օգտագործում չի նախատեսվում:		

	-	ՀԱԱԳ-ի ապահովագրությամբ նախաարտահանման ֆինանսավորման դեպքում մատակարարը ֆինանսավորված գումարը պարտավոր է ուղղել արտահանման պայմանագրի կատարման նպատակով շրջանառու միջոցների ձեռքբերմանը և որոշակի այլ ծախսերի (փաթեթավորում, տրանսպորտային և այլ ծախսեր) կատարմանը: Բանկը կարող է սահմանել այլ տրամադրման պայմաններ՝ ելնելով կոնկրետ գործարքի առանձնահատկությունից
Վարկի գումարի մարման կետանցի դեպքում օրական տույժ՝ % մարման ենթակա գումարից	0.1%	
Տոկոսագումարի մարման կետանցի դեպքում օրական տույժ՝ % մարման ենթակա գումարից	0.1%	
Ժամկետանց վարկի գումարի նկատմամբ հաշվարկվող տոկոսադրույք	նախատեսված է ՀՀ Քաղ. Օրենսգրքի 411 հոդվածի պահանջներով	
Վաղաժամկետ մարման դեպքում տույժ մարվող գումարից (վարկային գծի դեպքում տույժը հաշվարկվում է սահմանաչափի գումարից)	1%	Չի նախատեսվում

Վարկի գումարը կամ դրա մի մասը ոչ նպատակային օգտագործելու դեպքում՝ տույժ	Ոչ նպատակային օգտագործած գումարի 10%-ի չափով		Համաձայն ՀԱԱԳ-ի ապահովագրական սահմանաչափի պայմանների
Գործող պայմանագրի (վարկային, գրավի, բանկային երաշխիքի տրամադրման, այլ) պայմանների փոփոխություն/ վերանայում	50,000 դրամ *Գործող պայմանագրի փոփոխություն են համարվում առնվազն հետևյալ դեպքերը, եթե այլ դեպքերի համար առանձին որոշում չկայացվի Բանկի Վարկային Կոմիտեի կողմից՝* • *վարկային պայմանագրով սահմանված մարումների ժամանակացույցի վերանայումը, եթե նշվածի համար*		

	նախատեսված չէ վաղաժամկետ մարման համար սահմանված տույժի վճարում, • *հաճախորդի դիմումի համաձայն վարկային պայմանագրի այլ պայմանների (տոկոսադրույք, վարկի նպատակ, տարամադրման եղանակ և այլն) փոփոխությունը,* • *հաճախորդի դիմումի համաձայն ապահովության, այդ թվում՝ գրավի կամ երաշխավորության պայմանագրի հիմնական պայմանների փոփոխությունը, գրավի կամ երաշխավորության վաղաժամկետ ամբողջական կամ մասնակի ազատումը և այլնսակագինը չի տարածվում այն պայմանագրերի փոփոխության վրա, որոնց փոփոխությունը մեկ այլ պայմանագրի փոփոխության հետևանք է:*
Վարկի տրամադրման որոշումը կայացնելու ժամկետը	հաճախորդի կողմից պահանջվող բոլոր փաստաթղթերը բանկին տրամադրելուց 3-10 աշխատանքային օրվա ընթացքում, կախված գործարքի յուրահատկություններից, գումարից, բանկի հետ համագործակցության պատմությունից և այլն
Վարկի տրամադրման որոշման մասին հաճախորդին տեղեկացում	Մինչև 2 աշխատանքային օր
Վարկի ձևակերպման ժամկետը և վայրը	հաճախորդի կողմից վարկի ձևակերպման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց 3 աշխատանքային օրվա ընթացքում, Բանկի տարածքում
Հաստատված/ դեռ չտրամադրված վարկի պայմանների վերանայում	50,000 դրամ, սակայն ոչ ավել քան նախկին որոշման համար գանձված/գանձվելիք միջնորդավճարի գումարը
Գրավի գնահատման մոտավոր ծախս յուրաքանչյուր գույքային միավորի համար	Բնակելի հատվածի գույքի գնահատման համար՝ սկսած 15,000 ՀՀ դրամից Ոչ բնակելի հատվածի գույքի գնահատման համար՝ սկսած 25,000 ՀՀ դրամից, Տրանսպորտային միջոցների գնահատման համար՝ սկսած 8,000 ՀՀ դրամից **Մանրամասն տեղեկատվություն ստանալու համար տես Բանկի հետ համագործակցող մասնագիտացված գնահատող կազմակերպությունների ցանկը**
Գրավի ձևակերպում	• նոտարական վճար – միանվագ 13.000-25.000 ՀՀ դրամ՝ անշարժ գույքի գրավադրման դեպքում, • անշարժ գույքի գրավի իրավունքի գրանցման վճար՝ առավելագույնը 26.000 ՀՀ դրամ Տրանսպորային միջոցի գրավադրման դեպքում կատարվող վճարներ (միասնական տեղեկանքի և շարժական գույքի գրավադրման համար) – միանվագ 5.000 ՀՀ դրամ

[2]- Արտահանողներին տրամադրվում են հավելյալ զեղջեր և արտոնություններ: